

ՆՈՐԱՀԱՅՏ ԲԱՌԵՐ ՀԱՅ ՄԱՏՆԵԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ:

Լ. Շ. ՀՈՎՀԱՆԻՍՅԱՆ

1. ԵՎՍԵՐԻՈՍ ԵՄԵՍԱՑՈՒՔ ԶԱՌԵՐՈՒՄ

Եվսերիոս Եմեսացին IV դարի հեղինակ է, նա թողել է բազմաթիվ գործեր: Որոնց զգալի մասը հունարենից թարգմանված է նաև հայերեն: Պետք է ասել, որ նրա մի շարք գրվածքներ վերագրվել են այլ հեղինակների (Եվսերիոս Անտիոքացի, Աբերիանոս Գաբաղացի, Կյուրեղ Ալեքսանդրացի և այլք): Վերագրման հիմնական պատճառը թերևս Եմեսացու արիստական գործունեությունն էր: Գ. Զարբհանյանի կարծիքով, Եմեսացու գրածներն հայերեն մատենագրության մեջ չենք հանդիպած և չենք կարծիք, որ մեր նախնիք: անոնց թարգմանությունը զրադած ըլլան, հակառակորդը իրեն վարդապետական կարծյացալ:

Սա, ինչպես կտեսնենք, ճիշտ տեսակետ չէ:

1956—1959 թթ. «Հանդես ամսօրյայի» համարներում Ն. Ակինյանը հրատարակել է Եվսերիոս Եմեսացու 13 ճառերը, որոնք պահված էին Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի № 110 ձեռագրում (գրված XIII դարում): Ինչպես հաղորդում է Ակինյանը, այդ ճառերից մի քանիսը կրճատումներով մտել են ճառընտիրների և Կնիք հաւատոյ ժողովածուների մեջ, որոնք և նկատի են առնված նշված հրատարակության ժամանակ:

Ն. Ակինյանի հրատարակած ճառերի բանասիրական քննությունը մեր նպատակը չհամարելով՝ անդրադառնանք նրանց լեզվին, մասնավորապես, օգտագործված այն բառերին, որոնք գրաբարի բառարաններում ավանդված չեն:

Նյութը, լեզվական հատկանիշների հաշվառումով, ներկայացնում ենք որոշ գասակարգմամբ: Կանոնական բառաձևերի կամ ակնհայտ բառիմաստների դեպքում կրեքնք միայն համապատասխան օրինակը, առանց որևէ մեկնաբանության, այլ դեպքերում կփորձենք տալ բացատրություններ, բառաքնական դիտողություններ: Անշուշտ, մեր որոշ նկատառումներ կամ դիտարկումներ կարող են լինել թերի ու առարկելի: Անկախ այդ հանգամանքից, էական ենք համարում հենց նյութի ներկայացումը. նյութ, որ բացահայտում է գրաբարի բառապաշարի նոր տարրեր, որոնք նոր փաստեր են նաև բառարանագրության համար:

1 Գ. Զարբհանյան. Հայկական թարգմանությունը նախնեաց. Վենետիկ, 1889, էջ 680:

2 Վերջերս հրատարակվել է Եմեսացու մեկ այլ ծավալուն գործը՝ «Մեկնութիւն ութամատեան գրոց Աստուածաշնչին» (աշխատասիրութեամբ հ. Վահան վարդ. Ի Յովհաննէսեան, Վենետիկ, 1980):

3 Նկատի ունենք առաջին հերթին «նոր բառգիրք Հայկազեան լեզուի» (Վենետիկ, 1836—1837, այսուհետև՝ ՆՀԲ), որտեղ համապատասխան բառերը բերվում են վկայված օրինակներով: Համեմատել ենք նաև «Առձեռն բառարան Հայկազեան լեզուի» (Վենետիկ, 1865, այսուհետև՝ ԱԲ), Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանի» (Սրեան 1971—1978, այսուհետև՝ ԱՐ) հետ: Վերջիններում բառը վկայված լինելու դեպքում կնշենք: ԱԲ-ի վկայությունը էական չէ, քանի որ այնտեղ օրինակներ չկան, հետևաբար հեղինակի, գործի կամ ժամանակաշրջանի հարցում այն տեղեկություններ չի հաղորդում: Փանի որ ճառերը, ինչպես նշեցինք, զետեղված են ՀԱ-ի տարրեր համարներում, ուստի տարեթվերի, ամսագրի համարների ու էջերի ավելորդ հղումներից խուսափելու համար համապատասխան օրինակները կհղենք: Ըստ ճառերի համարների:

1. ՊԱՐԶ ԱՐԲԱՏԱԿԱՆ ԲԱՌԵՐԻ

Բարաւֆ—«Եւ քանզի անպողարբեր երկիր մեծն մշակապետ ճշմարտութեանն առաքէր հարկիս եւ քարաւս ի գործ, զի զսէզն կտուենցեն եւ զքարինսն հորդեցցեն և անպտուղ անգոն կակոնցեն և դարձուցեն ի պտղաբերութիւն» (ԺԳ)՝ Բառը ունի «Հերկող, մշակող» իմաստը։ Այդ է հաստատում և հաջորդ նախադասութիւնը. «Եւ զայս ոչ վայրապար ինչ կամ յախուն, այլ իրբեւ զուգականս եզինս ինչ հարկեաց երկուս երկուս լծէր»։

Ժնկլ—«Ժխտել, արհամարհել»—«Յորժամ տեսին զլոյսն ծագէալ ժխտեցին, ժհեցին զայտնութիւնն» (ԺԴ)։

Շիշալ(ֆ)—«Ջգես հալածեաց, զշիշաղս խռովեաց, զմահ մեռոյց, զթշնամին սպան, զանէծս երարծ» (է)։ Երեմիա Մեղրեցու բառարանում կա շիշալ քայքայ, որը և նշում է Արս-ը։ Ճառերից մեր բերած օրինակը հաստատում է այդ բառի գոյությունը։ Հստակ չէ բառի ձիշտ ձևը. շիշալ թե՛ շիշալայ։

(Զ) Աւուսնել—«...զի շամուսնել էւ շամուսնանալ ոչ մերոյ բնութեան է, այլ հրեշտակաց» (Զ)։ Այս օրինակում ուշագրավը բայի ժխտումը չէ (այդ պատճառով էլ այն չենք զետեղում նախածանցավոր բայերի շարքում), այլ (չ) ամուսնել ձևի առկայությունը։ Բառը վերկապակաւմարելու հիմք թերևս չունենք։ Եթե այն ուղղենք շամուսնանալ, ապա նույն բառի կողք-կողքի կիրառությունը տվյալ դեպքում անիմաստ կլինի։ Ինչպես գիտենք, գրաբարի վաղ շրջանում անյն միջնածանցները դեռևս պահել էին իրենց կերպային արժեքը՝ հանգես գալով երբեմն որպես տեական կերպի ցուցիչներ։ Սակայն նշված օրինակում երկու բայաձևերի միջև այդ հակադրությունը նշմարելու հիմք չկա։ Գուցե ինչ-ինչ լակոնիկ առկա է կերպասեմային այլ հակադրություն՝ ամուսնացնել-ամուսնանալ։ Դա նհարավոր է, բայց ամենայն հավանականությամբ թարգմանիչը տարբեր բայաձևերի կիրառումով փորձել է արական-իգական սեռ տարբերակումը տալ, որը կարող է հաստատել նախադասության շարունակությունը. «...ոչ ուսուցին հայր և մայր՝ փոխին կամ անկեղծ շամուսնանալ» (ընդգծումը մերն է—Լ. Հ.)։ Հիշենք, որ սեռային տարբերակման որոշ արհեստական ձևեր գրաբարում առկա են։ Օրինակ, Եվսեբիոսի Եկեղեցական պատմության հայերեն թարգմանության մեջ՝ «Եւ ասաց զնոցանէն, եթէ կողին հանգստարարայր և կանայր հաւգստարարիքայր» (ընդգծումը մերն է—Լ. Հ.)։ Սեռի զանազանությունը համար թարգմանիչը կցել է ասորական Լիճ իդականակերտ մասնիկը։

2. ՊԱՐԶ ԱՄԱՆՅԱՎՈՐ ԲԱՌԵՐԻ

Նախածանցավոր ձևերը համեմատաբար քիչ են։ Հանդիպել են անգլադակաւն, անաւան-գակաւն, անգրակաւն, շամուսնել ձևերը։ Վերջինիս մասին արդեն խոսել ենք, կրկնությունից խուսափելու համար մյուսներին անդրադառնում ենք վերջածանցավոր բառերի քննության մեծ, որոնք բավական շատ են։

ա) Ական-ով ձևեր

Անաւանգակաւն—«ամուրի, շամուսնացած»—«...զգեցաւ մարմինն յանարանցական արգանգի կուսին եւ եղեւ մարդ կատարեալ...» (է)։

Անգրակաւն—«չգրված»—«Բնութիւն մարդոյ վարդապետ է արինաց, քանզի յանձանց գիտեմք զքարին եւ զշար։ Եզ աստուած ի բնութեանն անդրական արէնս առ ի լուսավորել զմեր միտս» ԺԲ)։

Երբեմնակաւն—«փոփոխվող, ժամանակավոր»—«Ջի էրն երբեմնական կարծի. եւ իցեն իբրեւ թէ հանդերձեալ ինչ. իսկ էն ոչ այսպիսի ինչ անշրպետս ի մէջ ունի կատարեալ» (Բ)։

Գոտուակաւն—«Հարկանէ զՓարաւովն գործիք, վառեալս կազմեալս գունդս աւտարաւտիս գորտական զնդից. գունդս նոր եւ մարախական զնդից» (ԺԱ)՝։

4 Այս դասակարգման տակ ներկայացնում ենք նաև բայի անորոշ ձևերը։

5 Ժառի առանձին հատվածներ անհ Սեբերիանոսի Եմեսացույ Գրադացույ ճառք. Վենն-աիկ, 1830։ Ծավոք, վերոհիշյալ հատվածը Սեբերիանոսի զրքում բացակայում է։

6 Հմմտ. Եղ. Ը. 2—«Բուտ առ փարաւոն եւ ասացես ցնա... արձակեա զժողովարդ իմ, զի պաշտեսցեն զիս։ Ապա թէ ոչ կամիս դու արձակել, ահա հարից զամենայն սահմանս քո գորտիս»։

Լրբակա՛ն—«Մատուցեալ նախ ի լրբական կողմն հրէից, ըստ այնմ՝ թէ՛ ամենեքեան շունք են, լիրբք ե համերբ, որ ոչ կարեն հաշել»⁷:

Աիթե՛նալան—«Ոչ ի պսակաց ձիթենական տերեւո՛ւ ջանամք պսակել, այլ առ ի ճանաչել եւ լինել Աստուծոյ» (Գ):

Նպաստալան—«Եւ եթէ զժանտական, զժանտագործ զարն նպաստական, երեւիլի կոչէ եւ իրրեւ զրարեաց իմն պատահարս զատեցիկն յԱստուծոյ համարի» (ԺԳ):

Յո՛ւե՛նալան—«...արկանէին ի գործ առ ի ընդունել՝ զցորենական, սրբական՝ սերմն ճշմարտութեան բանին» (ԺԳ):

բ) -Ի—ածանցով բառեր

Գրդի—«Զոր օրինակ զրդի որ երթիցէ քարի, քարին ինչ ոչ ստանալէ; այլ զիւր զուխն ոգո՛ւ ոչ ապրեցուցանէ» (Բ): Գրաբարի գրդանք՝ «գետի հորձանուտ, հոսք» բառարմատի իմաստային կապը գրդի -ի հետ այնքան էլ ակնհայտ չէ: Բառարանները ունեն՝ նաեւ զԲԲի «սահեւ լով», որը թերեւ իմաստային զուգահեռ է գրդի բառի հետ, Կարելի է նշել բարբառային զիւրդ «կտրուկ, միանգամից» բառը, որը եթէ նորագոյն փոխառութիւն չէ, ապա ակունքները զալիս են գրաբարից:

Երեկի—«Եւ աստ է տեսանել նորագործ նորանշան որս, որ երեկի որսացեալ, այսար զայլս որսայ» (Բ): Ըստ երևութիւն հին բարբառային կամ՝ ժողովրդախոսակցական ձև է համտ Ղարաբաղի բարբառում Յրկէ՛ «երեկ» ըրգօնէ՛ «երեկոյան» և այլն:

գ) -Իկ—ածանցով

Ատեցիկ—(տե՛ս նպաստական-ի օրինակը): Ոսկերբանը ունի և մաղդաւեցիկ:

Արշաւանիկ—«Եւ արդ տես զԱստուծոյ միշտ արշաւանիկ դեսպանն, ոչ միայն ի ցամաքի՝ արշաւել, այլև ի ծովու» (ԺԳ):

Թողացուցիկ—«Ոչ եթէ զԱստուծոյ բանն խափանել կարէր, այլ յիւրմէ իւրովը շարութեամբքն գուն գործեալ դիմէր, առեալ աւճան յԱստուծոյ ի թողացուցիկ զարութենէն» (ԺԳ):

Պաշտանիկ—«Եւ արդ հարկ է, եղբարք, խնդրել, եթէ ո՛ր գործիցն մեծամեծ գործս առաքեալքն բան զՏէրն. զի մի բանք պաշտանիկը գործիցն եւ ոչ գործք ճշմարտութեան վկայեսցեն» (Ժ):

Պատուատիկ—«Զի եթէ Աստուած ի բուն ոստն ոչ խնայեաց, ի քեղ, ի պատուատիկդ, զիա՛րդ խնայեսցէ» (ԺԱ)Յ:

դ) -ՈՂ—ածանցով

Անկուշող—«աքացի տվող»—«Այսպիսի ինչ երկար տրմող աներասանակ էր Պաղոս... շանսական աստուածապաշտութեանն սանձանց, անկուշող, կցացող քրիստոսական օրինացն» (ԺԳ): Բառը այստեղ փոխաբերական իմաստով է՝ «չլսող շենթարկվող»: Բառարանները վկայում են անկուշել ձևը:

Կցացող—(տե՛ս վերի օրինակը): Բառարանները վկայում են կցացեմ. կցատեմ՝ «աքացել»:

ե) -Ութիւն—ածանցով

Յաւդաւածակաւութիւն—«Եթէ ոչ մի ինչ հաղորդութիւն ազգականութեան է մարմնոց առանձարմականս. զի մարմին յաւդաւածականութեան և անմարմինն պարզական» (Բ):

զ) -Ոիկ—ածանցով

Տրուկ—«Զայս ամենայն տեսանե՛ս եւ շամարիս զընութիւն հասարակարաշխ եւ զանձնիշխանութիւնն խտրոց կամ տրուկ» (ԺԱ):

3) ԲԱՐԴ ԲԱԻԿԻ

Աղբաման—«...այլ զնովին տեղեւք ստեղծ հաստատեաց եւ զայլ եւս փորոտին, որ աղբով եւ այլ եւս ազգի ազգի ժահիւք լի են, պէսպէս խորտկաց, զոր ուտէ մարդ, զի յորժամ սիրտն հանձարական հպարտանայցէ, սաստեցէ ի նա փորն աղբաման» (ԺԲ): Ուշագրաւ է, որ V դարի մեկ այլ հեղինակ՝ Հովհան Մանդակունի նույնպէս օգտագործում է՝ նմանատիպ մի՝

⁷ Այս բառը կա վկայված և VII դարից, Տե՛ս ՀԱ, 1985 (ն. Բյուզանդացու անտիպ գործերի Մ. Մինասյանի հրապարակումը):

⁸ Նկատի ունի Պողոս առաքելի «Առ հռովմեացիս» թղթի ԺԱ 20—21 հատվածը. «Իսկ արդ ասիցես. ոստքն փշրեցան, զի ես պատուաստեցայց... Աստուած ի բուն ոստն ոչ խնայեաց, գուցէ երբեք եւ ի քեղ ոչ խնայեսցէ: Ինչպէս տեսնում ենք Եմեսացին ի քեզ բառին ավելացրել է պաաւատեւիկդ գեղեցիկ մակդիրը, որը զարմանալիորեն տեղ չի գտել գրաբարի բառարան-նեւում:

մակդիր. «...և զաղբարոյն որովայնն փտեալ ապականիցէ» (ԺՁ. 127), Աղբարոյն-ը, որ դարձ-յալ եզակի վկայություն է, բառարաններում կա, իսկ աղբաման-ը՝ ոչ։

(յ) Առաջանալի—XI ճառում վկայված է երկու անգամ. «Ընդէ՞ր եւ առ հի՞մ... մարգարիտն յառաջանալի ի ցեխ եւ ի տիղմ թաւալէր» (22)։ «Ընդէ՞ր Յուդաս, յառաջանալիս նկատեալն եւ կոշեցեալն, շարդարացաւ (ն. տ.)։ Բառիմաստը հստակ չէ։ Գուցէ՞ առաջանալիք։

Արմատակալիւմ—«Քանզի որ ի հեթանոսաց հաւատացեալքն արմատակալեալ, կոճոպեալ համարէին զհրեական հաւատացեալսն» (ԺԱ)։ Զուգահեռ օրինակ է Ղարաբաղի բարբառի արկերը կալիւմիլ—տակոի «արմատա բառը։ Ուրեմն, բառը և բառակազմական կաղապարը գործուն են եղել գրաբարում։

Արտափոխեցիկ—«Ջուրս երեւելի արտաքուստ ի ներքս ի մեզ մտանէ. յորժամ առաջինն մտեալ հալիցի, դարձեալ ծարաւմք. ոչ լինի մեզ ջուրն աղբիւր, այլ պէտք արտաքսւրնկեցիկ» (Բ)։ Բառարանները ունեն արտափոխեցուքիւն։ ՆՀԲ-ն հղում է՝ տեւ Ընկեցուքիւն, ԱԲ-ն «դարձ փոխուքիւն։

Արիճատուր—«Սրբութիւն նոցա պղծութիւն է. եւ պա՛ք նոցա բամբասանք և ընթերցութեան անէծք, զի կերակրին եւ զարինատուրն բամբասեն» (Բ)։ ԱԲ-ն ունի օրիճատուր «օրենք տվող» աստված։

Ինքնաշու—«Ինքնաշու, ինքնախաղաց, առանց զգարգս ծածկէին, զարեւն ի մութ շրջէին» (ԺԱ)9։

Խորաբուն—«Այլ յորժամ պարտ էր սկսել, յայն ժամ խորաբուն լինէին զխաւորքն» (Բ)։

Կախեցեալ—«Նոյնպէս և աստ տային երեսուն արծաթի, զի վաճառեցի Տեառնորդին ի սպանել։ Երեսուն առ երեսուն, զի կատարեցի կանխանկար արինակ» (Բ)։ Այս բառին համանիշ է նախաեցալը. որը բառարաններում ավանդված է։ Ինչպես ծանոթագրության մեջ նշում է Ակինյանը, Ոսկերեւրանը մի քանի տեղ օգտագործում է նախաեցալը օրինակ կապակցությունը։ Նախաեցալը օգտագործում է նաև մեր հեղինակը. «Ձի զոր արինակ ի բազում անկեալ շուռառաւ։ թիւնս զնախանկար զղեղ աստուածապաշտութեանն մերկանալով նախագործ, նախակերտ, նախաստեղծ մարդն աղքատանայր» (ԺԲ)։

Կրկնածին—«Նոյնպէս ի նորոգել, ի նորանալ ընդունելով զԱստուծոյ բանն՝ մեծանայր և ոկնածինն, վերստնածինն, որ ըստ Աստուծոյ կամացն միաբանեալ շրջիցին» (ԺԲ)։

Համագլխեցուքիւն—«Նոյնպէս եւ աստուածական Առաքեալն զանձն ի մէջ արկեալ համագլխեցուքեանք ցածուցանէր զկոիւ հրէական հաւատացելոցն և հեթանոսականք» (ԺԲ)։ Բառարանները ունեն միայն համագլխեցուք համոզող, համոզիչ։ Ընդգծված բառը ունի նաև մեր հեղինակը. «Ջանձն ի մէջ արկեալ ոչ իբրեւ զդատաւոր, այլ իբրեւ համոզակեր» (ԺԲ)։ Համոզակեր-ի կեր բաղադրիչը իրանական kəz/ker բանել, գործել, գործա արմատն է, որ առկայաւում է հայերեն մի շարք բառերում՝ աղաղակեց, խոհակեր, աղաղակեց, խոհակեր, խոհակեր և այլն։

Հանդարտակոխ—«Ետեւս զտէրունական գալուստն յաւանական փառաւորեալ ի մէջ իբրեւ զառաջինն և ջանացաւ խոռվել ի շային կառացն թնդականաց առ ի խափանել զարշաւանալ յաւանակին, որ մեղմագնաց և հանդարտակոխ ոտիւք խափանեաց զկառամարտիկս» (ԺԳ)։ ԺԳ շառի այս հատվածը ներառված է Սեբեթիանոսի 11-րդ ճառում։ Այնտեղ ընդգծված բառի փոխարեն հանդարտագնաց է10։

Հաստավէր—«Վէրք ի վերայ դնէին. հաստավէր լինէր բանսարկուն» (Դ)։ Գրաբարում սաստիկ վերք իմաստով գործածվում է և խստավեր-ը, Հմմտ. «Զգուշանամք ի շար նետից նորա և խստավէր հարուածոցն» (Մանգ. Բ)։ Դա իրավունք չի տալիս սակայն հետադարձ-վէր-ը ուղղել խստավէր։ Մանգակունին օգտագործում է հաստ բաղադրիչով մեկ այլ հոմանիշ. «Հաստախոց ի գաղտնի նետից սատանայի» (ԺԷ)11։

Հողգզած12—«Ի ստեղծանելն ոչ գիտաց Աղամ, եթէ յերկրէ ստեղծաւ եւ յորժամ յառնէ ի յարութեան, իմանայ, եթէ հողգզած յարուցեալ հաստաւեալ կազմի» (ԺԳ)։ Հավանաբար երկրորդ բաղադրիչը զգածիլ «նազնել» բայի արմատն է։

9 Ինքնախաղաց բառարաններում բացատրվում է ինքնաբերիկ (ջուր)։ Մեր օրինակում խոսքը շրին չի վերաբերում, այլ գորտերի և մորեխի խմբերին։

10 Տե՛ս Սեբեթիանոսի մմեսացույ Գրաբաղացույ ճառը, էջ 198։

11 Տե՛ս Տեառն Յովհաննու Մանգակունույ Հայոց հայրապետի ճառը. Վենետիկ, 1860։

12 Այլ ձեռագրում՝ հողգզած, որը դարձյալ բառարաններում չկա։

Ձիամուլ—Բառը վկայված է Գ և ԺԱ ճառերում: ՎՈՂ եթէ հրահանգ ասպարիսաց ձիամուլ արշաւանք իցեն աստ, եթէ ակն ունիցիմք պարգեւս և պատիւս առնուլ աստ» (Գ): «...Ընդ հանկանկողս ուտել և ըմպել, ի գազանամարտիկս և ի ձիամուլս, ի տեսիլս արշաւանաց պարապեալ...» (ԺԱ): Գրաբարում հաճախական է ձիասէր բառը: Եմեսացու թարգմանիչը նախընտրում է ձիամուլ-ը:

Ձիապարծիկ—«Նոյնպէս և յովանական զձիապարծիկ գոռոզութիւն խրոխտելոցն քականաց» (ԺԳ) 13:

Ճաւնաճեմակաւն—«Տեսանե՛ս զի զճաւնաճեմական անպարտ սիգութիւնն մեղմաստյր հեղութեամբն ցածուցանէր» (ԺԳ): Սեբերիանոսի ԺԱ ճառում ներառված այս հատվածը ունի հաւանական 14, որը և վկայում են բառարանները: Մեր կարծիքով ճիշտը ճաւնաճեմակաւն է, որը ներառում է նաև ճեմելու գաղափարը: «Վեցօրեայումս հանդիպում ենք ճոճեալ ճեմացուպակիցէ (Գ), ճոճ և պերճ ճեմաւ (է):

Մաւղալույզ—«...զհայր և զմայր շնանալիցեն և ոչ զազատուհմ և ոչ զտեսարս քնակս. զգողսն կամ զմարդալույզն հայր և մայր կամ տեսարս քնակս հաշուիցին» (է): Թերևս ուղղելի է՝ մաւղելույզ: Հմմտ. «Ջծառայն ընդ աղատս խառնէ իբրեւ զմարդելույզ որ» (Ոսկ. ՊՈղ. Ա. 547): Մաւղալույզ-ը բառարանները մեկնում են «մարդագող», «շողորթ», խաբեբա»:

Մեղմաստյր—(տե՛ս ճաւնաճեմակաւն-ի օրինակը): Մեղմաստյր համանիշ է մեղմսզեւ-յի, որը նշված օրինակում կա. «Մեղմագնաց և Նանդարտակոխն ոտիք խախանեաց զկառամարտիկս և զերկարս պատերազմողաց»: Այս բառն էլ թերևս առաջինը օգտագործել է Եմեսացու հայ թարգմանիչը:

Մշակապետ—«Մեծն մշակապետ շնամարտութեանն առաքել հարկիս և թարութս ի գործ» (ԺԳ):

Ուղղաաց—«Ձէ պարտ նենգել զբանս ուղղասացս, այլ զհետ երթալ աստուածապայա մտաց» (Բ): Բառարանները ունեն՝ ուղղասագործիւն:

Պեւաճաւ—«Որ պա՛հէն անարատ զմանկունս յորովայնս և շարժեաց, ուղղեաց զլեզուս շեւա՛սսս յաւրճնութիւն...» (ԺԳ):

Ստայլել—«Եւ այլ եւս կամէի զայսպիսի աստուածականաց ճառել. քանզի չիք յագուրդ զԱստուծոյ պատմել. և ոչ ստայլել և ձանձրանալ ի քրիստոսական խաւից» (Գ): Ակինյանի կարծիքով սխալ գրություն է և պէտք է կարդալ սմայլել «կշտանալ, հագնել» (տե՛ս Թ. 92): Բայց բառը կարող է վրիպակ լինել: Ինչպես գիտենք գրաբարում այլ-ը ունի բազմաթիւ իմաստներ ու առումներ: Ստայլել-ը թերևս կազմված է ըստ նախորդի և այլել (հմմտ. այլայլել, «ոտարանալ, խորթանալ»): Ըստ այդմ ըստայլել < ստայլել պետք է նշանակի «խորթանալ, ոտարանալ, ձանձրանալ»: Ըստ < ստ-ի համար հմմտ. ըստանձնել-ստանձնել:

Վայրաստիս—«...ճշմարիտ է բժշկական արուեստն, որ ի հնոցն նախնեաց, որ զքնութիւն մարմնոց մարդկան կամէր հաւաստեալ ճշգրտել, թէ ո՞ր ինչ դեղ յոր վայրաստիս անդամոցն ազդիցէ: Զայլոց աղիսն հերձելով այլոց պաճարանս փրկութեան հնարէին» (ԺԱ): Հստակ չէ երկրորդ բաղադրիչի՝ աստիս նշանակությունը: Աստի՝ «այստեղ», աստի՝ «մարդ, արարած», աստի՝ «հաստատ»: Այս բոլոր բառերը նշված իմաստներով ինչ-որ չափով հարմարում են վերոգրյալ համատեքստին: Կասկածելի է նաև բառի անշատ կամ միասին գրության հարցը: Վայրաստիս կարող է նշանակել նաև «ներքին օրգաններ»: Հաջորդ նախադասությունն էլ կոնկրետ որևէ իմաստի հիմնավորում չի տալիս. «...արքունեալ դեղս կենդանւոյն հերձուին. զի մինչ դեռ աղիքն խլրտիցեն, իմանայցեն զազդուածս դեղոյն»:

Վերստնածին—(տե՛ս կրկնածին-ի օրինակը):

Փայտասուրբ—«Ջոր օրինակ շարչարանաւք զշարչարանսն երարծ և մահուն զմահն կապեաց և փայտասուրբ խաշին զհակառակորդին զզարսն խայտառակեաց» (ԺԳ): Սեբերիանոսի ԺԱ ճառի համապատասխան հատվածում՝ «...և մահուամբ զմահ կապեաց և փայտի սուրբ խաշին զհակառակորդին զօրութիւն խայտառակեաց...» (198) չկա փայտասուրբ բառը, որն ընդհանրապես չկա և բառարաններում: Կարելի է կարծել, որ առկա է փայտեա սուրբ խաշին անշատ գրության աղավաղման փաստ, բայց ե-ի սղումը թույլ է տալիս ենթադրելու, որ ճառերի

13 Ճառի այս հատվածը տե՛ս նաև Սեբերիանոսի ԺԱ ճառում, որտեղ մեզ հետաքրքրող բառի փոխարեն ձիամարտիկ է. «Նոյնպէս և յաւանական զձիամարտիկ գոռոզութիւն խրոխտացելոցն քականաց» (էջ 198):

14 Նույն աեղում, էջ 198:

թարգմանիլը ստեղծել է հոգակապավոր նոր բարդություն։ Այլ բան է, որ այն հաջողված նորակազմություն չէ։

Սրանք են Եվսեբիոս Եմեսացու ճառերում մեր կողմից նկատված նորահայտ բառերը։

Այժմ մի քանի նկատառումներ ճառերի թարգմանության ժամանակաշրջանի մասին։ Հրատարակության առաջաբանում Ակինյանը գրում է. «Եվսեբիոս Եմեսացու գրածներու և անոնց հայերէն թարգմանությանց պիտի անդրադառնամ յայնագոյն չափով ճառերուս հրատարակվելէն Լտքըն»։ Սակայն ճառերի հրատարակումից հետո այդպիսի քննություն չկա։ Միայն չէ, որ 1957 թ. համարում խոսում է Գ ճառի ընդարձակ և համառոտ բնագրի որոշ բանասիրական հարցերի մասին։ Մենք այլ տեղերում են չկարողացանք գտնել գիտնականի խոստացած ուսումնասիրությունը, եթե այն իրոք եղել է։

Քննությունը ցույց է տալիս, որ ճառերի լեզուն, ընդհանուր առմամբ էական տարբերություններ չի դրսևորում V դարի լեզվավիճակից։ Առանձին բառաձևերի ու բառերի առկայությունն էլ կարելի է համարել հետագա գրչագրական աղավաղումներ կամ սրբագրումներ։ V դարում թարգմանված լինելու օգտին են խոսում նաև այլ փաստեր։ Նշեք դրանք։

Ինչպես տեսանք, ճառերում մեծ թիվ են կազմում ավան-ով բառաձևերը, որ բնորոշ են համարվում դասական գրարարին¹⁵։ Նույնը կարելի է ասել և -իկ-ով ձևերի մասին։

Այժմ արդեն անընդունելի պետք է համարել Եմեսացու գործերը V դարում թարգմանված լինելու վարկածը (տե՛ս Զարրհանալյանի կարծիքը)։ Տակավին 1921 թ. բանասեր Ա. Վարդանյանը չէր հրատարակում է Եմեսացու երկու ճառ՝ թարգմանված V դարում։ 1980 թ. Վենետիկում հրատարակվում է Եմեսացու «Մեկնութիւնք ութամատնան գրոց Աստուածաշնչին» դիրքը։ Հայ բանասիրության մեջ այս մեկնությունները վերագրվում էին Կյուրեղ Ալեքսանդրացուն։ Բանասեր Վ. Հարությունյանը տարբեր բնագրերի ու ձևագրերի տքնաչան համեմատությունը պարզում է, որ ճառերի իսկական հեղինակը Եվսեբիոս Եմեսացին է, իսկ ճառերն էլ թարգմանված են V դարի առաջին կեսին։ Ի դեպ, թարգմանության ժամանակի հարցում նույն կարծիքին են թ. Բոռնյանը, Ն. Բյուզանդացին, Ն. Ակինյանը։ Ուրեմն, Եմեսացու որոշ գործերի դասական շրջանի թարգմանության հարցը կասկածից դուրս է։ Ինչ վերաբերում է ճառերի թարգմանությանը, ապա ինչպես տեսանք, առանձին հատվածներ նույնպես թարգմանվել են V դարում՝ վերագրվելով ուրիշ հեղինակների։ Տրամաբանական է կարծել, որ ճառերը այդ դարում թարգմանվել են ոչ թե հատվածաբար, այլ՝ ամբողջովին։ Ըստ երևույթին Ակինյանը նույնպես ճառերը դասական շրջանի թարգմանություն է դիտում, որն զգացվում է նրա որոշ ծանոթագրումներից։ Այսպես. «Անեբեիլիս ցուցանէր զնոսա արուեստի իւրեանց ճարտարութեանն» նախադասության ընդգծված բառի ծանոթագրության մեջ նշում է. «Դասական լեզուին խորթ է բառիս այս կազմութիւնը, որ միայն այստեղ երևան կու գա. թարգմանիլը աստ, տող 247 ունի բառս անեբեիլական, զոր նաև այս տեղ պետք է գործածած ըլլար» (ՉԱ, 1958, էջ 451)։ Մի խոսքով տարբեր կարգի փաստերը վկայում են, որ Եմեսացու ճառերը պետք է թարգմանված լինեն V դարում։

* * *

Եվսեբիոս Եմեսացու բառապաշարի քննությունը ցույց է տալիս, որ մի շարք բառեր թեև արտացոլված են գրաբարի բառարաններում, սակայն կամ առանց վկայության են, ինչպես ԱԲ-ում, որը հնարավորություն չի տալիս պարզելու բառօգտագործման հեղինակի և առաջին վկայության ժամանակաշրջանի հարցը, կամ վերագրված են այլ հեղինակների (ՆՉԲ), հաճախ՝ հետհինգերորդարյան, որը ոչ ճիշտ տեղեկություն է պատմական բառարանի համար։ Գրաբարի բառարաններից դուրս են մնացել նաև որոշ բառիմաստներ։ Ստորև նշենք մեր կողմից նկատված այդ կարգի բառերի մի խումբ։

Անփաղցակեան—«Քաղցեալ անքաղցականն յորժամ կամեցաւ քաղցնուլ» (Դ)։ ՆՉԲ-ում այդ բառով եղած վկայությունը Գրիգոր Նարեկացուց է։

Գեղեմաձին—«Գեղեմաձին»—«Հաւատք զմարդ երկրասնունդ քաղաքացի երկնաւոր քաղաքին առնեն»։ Հաւատք զմարդ գետնածին խորհրդակից երկնաւորին Աստուծոյ առնեն» (ԺԲ)։ ԱԲ-ն

15 Դասական գրարարի պաշտպանները մի շարք ձևեր ուղղում-դարձնում են —ավան-ով. անըմբռնելի—անըմբռնական, աստուածազան—աստուածական և այլն (տե՛ս Չ. Աճառյան. Հայոց լեզվի պատմություն. հ. 2, Երևան, 1951, էջ 90)։

ունի այս բառը՝ «գետնի երեսը բուսած» բացատրությամբ: Գետնածին-ը այստեղ նշանակում է առաւած, մտաղ: Գրաբարում ավելի հաճախական է երկրածին, հողածին: Երկիր, հող, գետին հոմանիշներից թարգմանիչը բնորոշ է վերջինիս և կերտել նոր բառ:

Երկրասնունդ (տե՛ս գետնածին-ի օրինակը): ՆՀԲ-ն երկրասնունդ գլխաբառի տակ բերում է Գրիգոր Նարեկացու «Յրկնակենցաղը և ոչ երկրասնունդը» վկայությունը:

Կիսաբերան—«Ապա կաղս ի կաղս ընդ քիմս կիսաբերան ծանոթական խղճին ասէր» (Ե): ՆՀԲ-ում վկայված է միայն այս օրինակը՝ ալ վերագրումով:

Կտուց—«Քանզի ոչ եթէ ամենայն լեզուն խաւսի, ալլ փոքր մի մասն կտցուին» (ԺԲ): ՆՀԲ-ն նշում է երկու վկայություն ուշ շրջանից, մեկը՝ Նարեկացուց:

Հետաւածի—«Խնդայր և մատնիչն իբրեւ ուղղութիւնս ինչ կատարեալ: Երթալ հետաւածի և Պետրոս՝ կասկածազին ի կանխասաց ուրացութենէն» (Ե): Նախ՝ բառաձևի մասին: Միայն Արմ-ն է նշում այդ ձևը՝ այլ հեղինակից. «Հետաւածի տեսանել թե յո՛ւ երթալցեն»: Աճառյանը կասկածում է, որ կարող է լինել հետաւած տեսանել¹⁶: Մեր օրինակի ծանոթագրության մեջ Ակիսյանը նշում է, որ մեկ այլ ձեռագիր ունի գնետ կատարածի¹⁷: Սակայն նա ձիշտ է համարում հետաւածի ձևը, որպէս զուգահեռ բերելով Ոսկերեքանից մի հատված, բայց այս հատվածում էլ գրությունը անջատ է: Հմմտ. «Քանզի ալնպէս իսկ միշտ սատանայ ջանայ յամենայնք հնարս գտանել, ոչ ընդ ուղիղ ճանապարհն գալ եթէ զգուշանայցեմք, սլլ զարտուղի հետ արածի» (Ոսկ. Պող. Ա. 547): Նկատենք, որ Մանդակունու մոտ էլ կա համանման մի նախադասություն. «Վասն զի գող է և ոչ ընդ յալտնի ճանապարհն գնալ՝ եթէ զգուշանայցեմք, ալլ զաղտնի և զհետ արած է և անկանածի տալ արածարնել զմեծամեծս պատուիրանացն» (135): Աճառյանը Արմ-ում հետաւածի-ն մեկնում է «լրտեսելու համար զաղտուկ երթալով»: Բերված բոլոր օրինակներում այդ իմաստը առկա է: Սակայն եմեսացու ձառերից քաղված օրինակում թերևս ունի նաև «հեռվից հետեւել, հետևից գնալ» իմաստը, որի հաստատումն է Մատթեոսի Ավետարանի այն հատվածը, որտեղ խոսվում է Քրիստոսին բռնելու և Պետրոսի արարքի մասին. «Իսկ նոցա կալեալ զՅիսուս ածին առ Կայիափա քահանայապետ՝ ուր դպիրքն և ծերբ ժողովեալ էին: Եւ Պետրոս երթալ բացազուն մինչեւ ի սրա՝ քահանայապետին» (ԻՁ, 57—73): Այս է ակնարկված և եմեսացու ձառում: Ուրեմն ըստ համատեքստի երբայր հետաւածի-ն համանիշ է երբայր բազազոյն-ին:

Խաւտարկել—«Ի սկզբանէ էր, ասէ, բանն. ղէրն մատարկեաց, զի մի խնդրեսցես զժամանակ» (Ա): Բառը ունի ԱԲ-ն՝ «մոտենալ» նշանակությամբ:

Ազածեմ—«...Ձի եթէ ալպիսի է տկարութեամբ սգածեալ հպարտանալ և շճանալէ զարարին եւ անարգէ զստեղծին» (ԺԲ): ԱԲ-ն ունի սգածեմ «սգալ», որն ակնայտորեն այս համատեքստին չի համապատասխանում: Ազածեալ-ի մեջ սկզբ արմատի առկայությունը իմաստի տեսակետից նույնպէս մերժելի չէ, սակայն առարկելի է նեղացածեալ — սիգածեալ — սգածեալ հնչյունափոխությունը¹⁸:

Բառը կարելի է և ուղղել՝ զզածեալ (զզածեմ — «կրեմ, համակվել, ունենալ») հմմտ. «Չափով շարշարակից կարող է լինել տգիտաց եւ մոլորելոց, քանզի եւ ինքն իսկ տկարութեամբ զգածեալ է» (Առ երբ. ե. 2):

Տոգոր—«Ձոր օրինակ, որ ներկանիցէ ինչ, ստէպ, ստէպ մխեն անդրէն ի տոգորսն, զի ի խոր անուցուն նարատքն զներկումն» (ԺԲ): Ըստ ՆՀԲ-ի և ԱԲ-ի բառը վկայված է միայն շորս անգամ Գրիգոր Մագիստրոսի մոտ: Արմ-ը համարում է անստույգ բառ: Գ. Մենեվիչյանը (ՀԱ, 1911, էջ 666—671), քննելով Գրիգոր Մագիստրոսի «Գամագիտականը», անդրադառնում է և այս բառին՝ տեսնելով «մրցություն» իմաստը, որն իրոք ենթադրվում է Մագիստրոսի վկայած օրինակներից: Գալով տոգոր բառի «ներկ» նշանակությանը, որ տալիս են բառարանները, Գ. Մենեվիչյանը գրում է. «Մագիստրոս 2—3 անգամ կգործածե տոգորը, որուն ԱԳԲ և Երեմ. ներկոց նշանակությունը կուտան: Իհարկե տեղ մը գործածված պիտի ըլլա այս նշանակությամբ ալ, ապա թե ոչ այն բառազուգորները չէին հիշատակեր. բայց ո՞ւր, անծանոթ է այժմ» (ՀԱ, 1911, 665): Եմեսացուց վկայված օրինակում այդ իմաստն է:

16 Տե՛ս Արմ. հետ արմատի տակ:

17 ՀԱ, 1957, էջ 369:

18 Մեկ այլ ձեռագիր ունի ըսգածեալ. որը դարձյալ կողմնակի ապացույց է, որ սկզբ արմատը չի կարող լինել:

2. ԵՓՐԵՄ ԱՍՈՐՈՒ ԿՏՈՒՐԳՆԵՐՈՒՄ

Եփրեմ Ասորու Կցուրգների հայերեն բնագիրը հրատարակել է Ն. Ակիսյանը¹⁹։ Մինչ այս հրատարակությունը, ավելի ճիշտ՝ մինչև 1939 թ., ծանոթ էր «Կցուրգքի» միակ ձևագրերը՝ պահված էմիգրանտ 821 թվահամարի տակ։ Ակիսյանի հրատարակությունը կատարված է մի շարք ձևագրերի համեմատությամբ²⁰։

Խարզմանությունը կատարված է V դարում։ Բառարաններում չվկայված բառերը ներկայացնում ենք. նշելով կցուրգների համարը և էջը ըստ գրքի։

Անդ (f) «առու, անթ»։ ՆՃԲ-ն անուր բառահոգվածի տակ նշում է ոգրի և անթ կամ անդ»։ Վերջինով, սակայն, գրաբարյան շրջանից օրինակներ չի նկատում։ Ներքոհիշյալ օրինակը հաստատում է անդ ձևի առկայությունը V դարում, եթե, իհարկե, այն էտին շրջանի գրագրությունն է։ «...անդք լի բազկովք իւրովք առնոյր և ի ձեռաց նորա ոչ պակասէր» (Ժէ, 43)²¹։

Արսւլիւ—«Յարեան րնչերքն, զնացին րնդ նմա իւրեւ յորս եւ ի ըգբօսանս. զի սթափեսցին ի տրտմութենէ և բերցեն զաւրապի՜հ աւուրն» (ԼԲ, 80)։ Բառարանները ունեն օրապահի «օրապահիկ», «օրվա ուրեւի... նան» պին «առնալ», «թոշակ» վկայված V դարից։ Ուրեմն, արսւլիւ-ը հավաստի ձև է²²։

Իսրովալուսւ—«Իսրովախաւք ոչ հատանին եւ յաղաթս վհատութիւն է մեզ» (ԼԳ, 71)²³։

Իրոն—«նտուն դրո՜ տունն Աբրահամու, զի տեսցեն զիջանել զուարթնոցն»²⁴։ Բառարանները ունեն դոն, դոն տալ «գրոհել, վազել»։

Չովեստ—«Գիշերն անցուցանէ գովեստն իւր, առաւառն հրածարէ զխրախութիւն նորա» (Գ, 7)։ Ակիսյանը ծանոթագրության մեջ ենթադրում է զգովեստն։ Լ. Տեր-Պետրոսյանը ուղղում է զովվեստ նորս։ Կարելի է հնարավոր համարել և զովեստ բառի առկայությունը՝ իրանական շՅՎ «կանչել, ասել» արմատից, որից ունենք նգով, զուեստ և ալն, ինչպես իր. ջուս «ասել» արմատից՝ զովեստ, զովել և ալն։

Թամկենի—«Թէ հարսն սիգայ զարդու իւրով, այնու որ ոչն բոշխնի եւ ժամկենի պսակաւ, զոր դնէ նմա փեսայն, սակաւ աւուրց» (ԽԶ, 95)։ Մի քանի ձևագրեր ունեն ժամահակեսն։ Վերջինս օգտագործված է նաև նույն կցուրդի մեկ այլ հատվածում. «Ժամանակեան առազատիւս զնեաց զառազատն ճշմարտութեան», եթե ժամկենի-ն վրիպակ չէ, ապա ենթադրելի է որպես բարբառային ձև։

Անառնալուր—«Բայց մի որ զմտաւ ածիցէ, եթէ ի հալածանաց լեռոնալուր եղեն. ի լեռոնէ էջ եղիա եւ քարոզեաց մահ որդւոյն Ախարու» (Բ, 5)։ Բառի երկրորդ բաղադրիչը ալուր-ը ալուրել-ի արմատն է։ Վերջինս V դարում ուներ «ալատվել» նշանակությունը. իմաստի լայնացմամբ՝ «ապրել, բնակվել»։ Անառնալը նկատում է, որ «արդեն հին լեզվի մեջ էլ կան պարագաներ, ուր «ազատելու» հետ նաև «կեալ» նշանակությունը անբաժան է։ Մեր օրինակը ալուր «ապրել, բնակվել»-ի ևս մեկ օրինակ է V դարից։

Խոհակերումն—«Միով կատարիալ պատարագան ինայեաց զոշխարս ի սպանմանէ և զորթս ի խոհակերմանէ և զթուլունս ի յաշուածոյ» (ՍԱ, 106)։ Բառարանները ունեն խոհակեր, խոհակերական, խոհակերեմ, խոհակերութիւն։

Հանգստեղ—«Եւ ի հանգստեան խափանին լալիք և զբասանք, ի մտանել իւր ի շէն հանգստեղ» (Գ, 7)։ Ըստ Լ. Տեր-Պետրոսյանի այլ ձևագրում՝ հանգստատեղ (սրբագրված հանգստեղ)։ Տեղ արմատի էալ (սեռ. ետեղ) տարբերակը հին ձև է, դասական մատենագրության մեջ ավանդված մի քանի անգամ (տե՛ս Արմ, տեղ արմատի տակ)։ Հանգստեղ-ը այդ բնույթի բառերից է։

¹⁹ Կցուրգք ս. Եփրեմի եորին Ասորոյ, հրատարակեց հանդերձ ներածութեամբ հ. Ներսէս Ակիսեան. Վիեննա, 1957։

²⁰ Կցուրգների վերաբերյալ ծավալուն ու դիտարժան բնագրական ճշգրտումներ ունի Լ. Տեր-Պետրոսյանը (տե՛ս ՂԱ, 1978, էջ 15—48)։ Հաշվի ենք առել նաև այդ նկատառումները։

²¹ Արիստակես Վարդանյանի անք և անդ համարում է անուր-ի աղավաղ ձևեր։

²² Տե՛ս Ա. Վարդանյանի ուղղումը (Բառաքնական դիտողություններ, Գ, 30—31), որը և ընդունում է Հ. Անադյանը (տե՛ս Արմ, պին բառի տակ)։

²³ Այլ ձևագրում՝ զսով խօսի (տե՛ս Ակիսյանի ծանոթագրությունը)։

²⁴ Լ. Տեր-Պետրոսյանը ուղղում է՝ դոն (ՂԱ, 1978, 37)։

Պատերազմաւոր—սու ոչ զրահք պիտոյ են անդ, զի սպառնցան նետք թշուառուն անդադար պատերազմաւորաց» (Կ, 8): Ըստ Ակինյանի այլ տարբերակում՝ պատերազմաց է, Լ. Տեր-Պետրոսյանը սխալ է համարում անդադար պատերազմաւորաց-ը:

Մրուիլ—«Սրուիլս հարկանեն երիտասարդք և շնարաւորք երգեն շնարիք երգեցիկք փողովք իւրեանց և արուեստական նուագաւք իւրեանց» (Դ, 6): Նրաժշական գործիքի անվանում է: Բառի ստուգարանության հարցը դժվարութիւն է հարուցում: Ճիշտ է, իմաստի տեսակետից նարմար է ոռւս. свирель, բուլղ. свирол «փիլ»՝ սլավ. *svьr-ից: Սրանց դուդակներն են լիտ. surma «շվի», հնդ. svāratī «հնչում է», svaras «ձայն», սակայն արանից ոչ մեկը հայերենի անմիջական փոխառության աղբյուր չի կարող լինել:

Տարեւածեմ—«Մարմնոյ բարի է ի միայնում տան, քանզի ոչ տարեւածեն զնա ցանկութիւնք» (Բ, 5): Տարեւածեմ-ը համանիշ է տարութեմ-ին: Առկա է անսխալ թրեմել» բառով կազմված մի առաջին վկայութիւն, որն ըստ երեւութի հաճախական չի եղել V դարում:

Այսպիսով, սրան այս երկու գործում զրարարի բառարաններում յաճանդված մոտ 70 բառերի առկայութիւնը հուշում է, որ հայ սատոնագրութիւն բառապաշարը խոր և ամբողջական ուսումնասիրութիւն կարիք ունի: Նման կարգի բառերի հայտնաբերումը և արձանագրումը կնպաստի «Հայոց լեզվի պատմական բառարանի» ստեղծմանը, որի աշխատանքներին ձեռնամուխ է եղել ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտը:

НОВООБНАРУЖЕННЫЕ СЛОВА В ДРЕВНЕАРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЕ

Л. Ш. АВАНЕСЯН

Резюме

В статье рассматривается более 70-ти слов из текстов Гомилий Евсевия Эмесского и Гимнов Ефрема Сирина, не зафиксированных в словарях древнеармянского языка.

Большинство этих слов — суффиксальные или сложные, однако, встречаются и непроизводные слова: *խարա* «пахарь», *ժհել* «отказывать, игнорировать», *զրզր* «сразу, резко», *սրուիլ* (музыкальный инструмент)...

Дана этимология или интерпретация некоторых слов. Собранный материал предназначен для готовящегося «Исторического словаря армянского языка».